ԳԷՈՐԳ ՍԱՐԿԱՒԱԳ ԳԷՈՐԳԵԱՆ

# ՊԱՊՆ ՈՒ ՇԱՂԳԱՄԸ



## Հէքեաթի քրիստոնէական իմաստը

ԵՐԵՒԱՆ 2024

Կազմի եւ տիտղոսաթերթի նկարները՝ Սեդա Վիրաբեանի, Մխիթար Սեբաստացի կրթահամալիր, Հիւսիսային դպրոցի 3.2 դասարան:

Նկարները ներբեռնուած են հետեւեալ կայքից՝
https://poqrik.am/yerexanerin/բեմադրում-ենք-պապն-ու-շաղգամը/

redpoint
PRINTING HOUSE

Տպագրուած է «Red Point» ՍՊԸ-ի տպարանում:

Սոյն գրքոյկը հրատարակւում է
ազնիւ մեկենասութեամբ

**ՄԵՐԻ ՍԱՐԻԲԱՇԵԱՆԻ՝**

*ի յիշատակ իր հանգուցեալ սիրեցեալ ամուսնոյն՝*

**ՔՐԻՍՏԱՓՈՐ ՍԱՐԻԲԱՇԵԱՆԻ**

# ՍՐՏԻ ԽՕՍՔ

Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմի կրօնական, հոգեւոր, ծիսական կամ դաստիարակչական հրատարակութիւնները կը միտին հոգեկան եւ իմացական բաւարարութիւն տալ բոլոր տարիքներուն, մանուկներէն մինչեւ տարեցները, որովհետեւ կը հաւատանք, որ իւրաքանչիւր գիրք տարբեր ճաշակ մը եւ նոր պատգամ կը փոխանցէ ընթերցողին, կը խրախուսէ, կը համեմէ եւ կ՛իմաստաւորէ անոր կեանքը:

Ներկայ հրատարակութեամբ, Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմէն լոյս կ՛ընծայուի Բարեշնորհ Գէորգ Սարկաւագ Գէորգեանի կրօնաբոյր մէկ այլ աշխատասիրութիւնը, որ խորքին մէջ վերլուծութիւնն է «Պապն ու Շաղգամը» մանկապատանեկան առակին: Ինչպէս մեր Տիրոջ պատմած բոլոր առակները իրենց մէջ երբեմն թաքուն եւ երբեմն բացայայտ պատգամներ ունին մարդուն հասցէագրուած եւ որոնք մարդը կը պատրաստեն կամ յաճախ զգաստութեան կը հրաւիրեն ճանչնալու իր անձը, սրբագրելու իր ընթացքը եւ յաղթահարելու կեանքի երեւելի եւ աներեւոյթ դժուարութիւնները:

«Պապն ու Շաղգամը» պատմութիւնը թէեւ կարճ եւ դիւրըմբռնելի է ընթերցողին համար եւ ուղղուած է առաւելաբար մանուկներուն, սակայն շնորհիւ Գէորգ Սարկաւագ Գէորգեանի աստուածատուր շնորհներուն, Աւետարանական ճշմարտութիւններու ճիշդ ձեւով ընկալումին եւ առողջ վերլուծումներուն, յաջողած է մանկապատանեկան այս պարզ առակը քրիստոնէական հաւատքի ճանաչողութեան գեղեցիկ միջոցի ու ազդակի մը վերածել:

Ինչպէս Քրիստոսի բոլոր առակները, այս պարզ առակն ալ իր աւարտին ընկերսիրութեան, հաշտութեան,

միասնականութեան, հաւաքական աշխատանքի եւ յաջողութեան պատգամներ կը փոխանցէ որքան մանուկին, նոյնքան եւս առաւել չափահաս ընթերցողին:

«Պապն ու Շաղգամը» կարճ առակին եւ Գէորգ Սարկաւագ Գէորգեանի «Պապն ու Շաղգամը հէքեաթի քրիստոնէական իմաստը» աշխատասիրութեան համատեղ հրատարակութեան առթիւ կը գնահատենք Սարկաւագին մանաւանդ այն կարողութիւնը, որով յաջողած է պարզ այս հէքեաթին տալ քրիստոնէական տարազաւորում, իմաստ եւ նշանակութիւն:

Մեր սպասումն է, որ մեր ժողովուրդի զաւակները, մեր թանկագին ծնողները, նուիրեալ դաստիարակները, ականաւոր մտաւորական գործիչները եւ նոյնիսկ հովուական ծառայութեան քաղցր լուծը շալկած մեր հոգեւորականները հաճոյքն ունենան ընթերցելու այս գիրքը, այն խոր հաւատքն ու համոզումը ունենալով, թէ՝ Աւետարանի բառերով իրաւապէս ***անտեսուած քարը*** որեւէ յաջող ու հաւաքական ձեռնարկի մը ***հիմնաքարը կրնայ դառնալ*** եւ թէ՝ չերեւցող ***մանանեխի հատիկը*** կրնայ իսկապէս ***լեռներ տեղաշարժել***, երբ մարդուն մէջ կայ իրարօգնութեան յանձնառութիւնը, նպատակասլաց աշխատանքի կամքը, միութեան զօրութիւնը եւ համերաշխութիւնը, վերջապէս զոհաբերութիւնն եւ համառ աշխատասիրութիւնը:

Օրհնութեամբ՝

Յովնան Արք. Տէրտէրեան

Առաջնորդ՝ ԱՄՆ Արեւմտեան Թեմի

21 Օգոստոս, 2024

# ՄՈՒՏՔ

Իւրաքանչիւր մանկական հէքեաթում կայ նաեւ մէկ այլ հէքեաթ, որը միայն չափահասները կարող են լիովին հասկանալ: Մանուկները կարող են դա չտեսնել՝ հէքեաթն ընկալելով միայն մակերեսային կերպով: Խորհրդաւոր եւ երեւակայական աշխարհը գրաւիչ է մանուկների համար: Նրանք ապրում են երեւակայական, անիրական աշխարհում եւ ոչ միայն ապրում, այլեւ ջանում են փոխակերպել այն: Չէ՞ որ հէնց հէքեաթների գանձարանից են փոքրիկները տեղեկատուութիւն ու խրատներ քաղում իրականութեան, բարոյախօսութեան եւ ապագայի առանձնայատկութիւնների մասին, որոնք դեռ անծանօթ են իրենց:

Որոշ հէքեաթներ ունեն դաստիարակչական մեծ խորհուրդ եւ հոգեւոր պատգամ: Հէքեաթի նպատակն է երեխաների մէջ դաստիարակել բարոյական ինքնաճանաչողական արժէքներ, որպէսզի նրանք կարողանան տարբերակել աշխարհի չարն ու բարին եւ կեանքում ուղղորդուեն դրական՝ բարոյական սկզբունքներով եւ արժէքներով: Կարեւոր է նաեւ, թէ որքանո՛վ են նրանք ընկալում հէքեաթի ասելիքը, եւ որքանո՛վ են դրանք համարւում արդիական: Մարդ արարածը սիրում է սովորել օրինակներով: Կենդանի օրինակը նրա համար աւելի դիւրին է, քան վերացական խրատը: Հէքեաթը նպատակ ունի իրական կեանքում օգնել՝ աւելի հեշտ ապրելու: Ահա այս

առումով էլ դեռեւս հին ժամանակներից մինչեւ այսօր հէքեաթները սիրուած են բոլորի կողմից՝ անկախ նրանց տարիքից, ու շարունակում են մնալ որպէս գրականութեան հետաքրքիր ու ինքնատիպ տեսակ:

Հէքեաթը բանահիւսական արկածային, իմաստասիրական եւ կենցաղային բովանդակութեամբ մի պատում է, որ հիւսուած է գեղարուեստական հնարանքի իւրատեսակ միջոցներով: Հէքեաթում հերոսները եւ դէպքերը պատկերուած են չափազանցուած կամ այլաբանօրէն: Հէքեաթի նպատակը երեխայի մէջ մարդասիրութիւն զարգացնելն է, ուրիշների դժբախտութիւնների համար անհանգստանալու հրաշալի կարողութիւնը, դիմացինի ուրախութեամբ ուրախանալու եւ նրան բաժին հասած կեանքն զգալու հրաշալի ունակութիւնը: Հէքեաթի մէջ արտայայտւում է երեխայի նուիրական երազանքներն ու ձգտումները: Այն, ինչ կեանքում անհնար է եղել իրականացնել, մարդիկ ցանկացել են իրականացած տեսնել հէքեաթներում: Ի վերջոյ, հէքեաթը բարելաւում, հարստացնում եւ մարդկայնացնում է երեխայի բարոյահոգեբանական վիճակը, քանի որ հէքեաթ լսող փոքրիկն իրեն զգում է որպէս դրա գործնական մասնակիցը եւ իրեն միշտ նոյնացնում է նրա հերոսների հետ, ովքեր պայքարում են արդարութեան, բարութեան եւ ազատութեան համար: Հէքեաթը մեծ ազդեցութիւն ունի երեխաների հոգեւոր, բարոյական, աշխատանքային, գեղագիտական, մտաւոր կրթութեան, հասարակութեան մէջ վարքագծի եւ շրջակայ կեանքի

նկատմամբ վերաբերմունքի վրայ: Հէքեաթի օգնութեամբ կուտակուած գիտելիքներն ու ընկերային փորձը փոխանցւում են սերնդեսերունդ: Հէքեաթներն արտացոլում են բարի ուժերը մարմնաւորող հերոսների պայքարը չար ուժերի դէմ: Չար ուժերն են՝ դեւերը, կախարդները, վհուկները, վիշապները եւ այլն: Հէքեաթների միջոցով ծաղրւում են մարդկային վատ սովորութիւնները, գովաբանւում են առաքինութիւնները: Գրեթէ բոլոր հէքեաթներում չարի եւ բարու միջեւ պայքար կայ, եւ այդ պայքարը միշտ աւարտւում է բարի ուժերի յաղթանակով: Հէքեաթի միջոցով այլաբանօրէն ներկայացւում են մարդկային որոշակի յատկանիշներ. մի կողմից՝ չարութիւնը, նախանձը, ագահութիւնը, ժլատութիւնը, մեծամտութիւնը, իսկ միւս կողմից՝ բարութիւնը, անձնազոհութիւնը, վեհանձնութիւնը, ազնւութիւնը, արդարամտութիւնը, հաւատարմութիւնը, իմաստութիւնը: Հէքեաթներում նկարագրւում են ժողովրդի կեանքը, մարդկային վսեմ ու նսեմ ձգտումները:

«Շաղգամը» Ալեքսեյ Տոլստոյի գրած ռուսական ժողովրդական հէքեաթն է, որն առաջին անգամ հրատարակուեց 1863 թուականին բանահիւսութեան գիտաշխատող Ա. Ն. Ա֊ֆանասեւի կողմից իր «Ռուսական ժողովրդական հէքեաթներ» ժողովածուում: Յետագայում հէքեաթը բազմիցս վերաշարադրուել եւ յարմարեցուել է տարբեր լեզուներով թարգմանութիւններին: Հայ տաղանդաւոր առակագիր ու մանկագիր-բանաստեղծ Աթաբեկ Խնկոյեանը

(Խնկո Ապեր) «Պապն ու շաղգամը» հէքեաթը թարգմանեց 1991 թուականին Թիֆլիսում:

Հաւանաբար շատերն են վաղ մանկութիւնից յիշում «Պապն ու շաղգամը» հէքեաթը: Գուցէ կարծում էք, թէ հէքեաթները մանուկների համար են միայն, եւ ամէն ինչ պարզ է այստեղ: Բայց ի՞նչ հիանալի մտքեր են թաքնուած հէնց այս հէքեաթում: Այդպիսի հսկայական շաղգամ հանելու համար, իհարկէ, պէտք է քրտնաջան աշխատանք կատարել: Նոյնիսկ մանուկներն են հասկանում դա: Բայց սա դեռ ամէնը չէ: Հէքեաթն իր մէջ պարունակում է ժողովրդական եւ հոգեւոր իմաստութիւն, որը թաքնուած է բառերի ետեւում, եւ դուք պէտք է կարողանաք բացայայտել այն: Ուրեմն, եկէ՛ք սկսենք պարզել այն:

# ՊԱՊՆ ՈՒ ՇԱՂԳԱՄԸ

Դռան առաջ մի անգամ պապը ցանեց մի շաղգամ:

Շաղգամն աճեց, մեծացաւ: Պապը տեսաւ, զարմացաւ: Պապը քաշեց, քաշքշեց, շաղգամը հողից չհանեց:

Պապը կանչեց տատիկին: Տատը պապից, պապը շաղգամից քաշեցին, քաշքշեցին, շաղ-գամը հողից չհանեցին:

Տատը կանչեց թոռնիկին: Թոռը տատից, տատը պապից, պապը շաղգամից քաշեցին, քաշքշեցին, շաղգամը հողից չհանեցին:

Թոռը կանչեց շնիկին: Շունը թոռից, թոռը տատից, տատը պապից, պապը շաղգամից հա՛ քաշեցին, քաշքշեցին, շաղգամը հողից չհանեցին:

Շունը կանչեց փիսոյին: Փիսոն շնից, շունը թոռից, թոռը տատից, տատը պապից, պապը շաղգամից հա՛ քաշեցին, քաշքշեցին, շաղգամը հողից չհանեցին:

Հէնց այդ ժամանակ մի փոքրիկ մկնիկ էր անցնում: «Ի՞նչ էք անում»,- հարցրեց մկնիկը: «Մենք փորձում ենք այս մեծ եւ ահռելի շաղգամը հողից հանել»,- ասում էին նրանք բոլորը: «Կարո՞ղ եմ օգնել ձեզ»,- հարցրեց մկնիկը: «Դու շատ փոքր ես»,- պատասխանեցին բոլորը: «Դէ, թողէք փոր-ձեմ: Կարծում եմ, որ կարող եմ օգնել ձեզ»,- ասաց մկնիկը:

Ուստի, մուկը՝ փիսոյից, փիսոն՝ շնից, շունը՝ թոռից, թոռը՝ տատից, տատը՝ պապից, պապը՝ շաղգամից քաշեցին, քաշքշեցին, եւ… շաղգամը հողից հանեցին: Փոքրիկ մկնիկի օգնութեամբ վերջապէս շաղգամը դուրս եկաւ:

# «Պապն ու շաղգամը» հէքեաթի քրիստոնէական իմաստը

Այս հէքեաթը շատ խորը իմաստ ունի: Այն մեզ սովորեցնում է նախ՝ փոխօգնութիւն եւ քրտնաջան աշխատանք, երկրորդ՝ միշտ բարութիւն անել եւ հաշտուել ծանօթների, հարազատների, մեզ ատողների ու մեր թշնամիների հետ, ամէն ջանք գործադրել՝ այդ նպատակին հասնելու համար, նաեւ չվախենալ օգնել եւ օգնութիւն խնդրել:

Հէքեաթում չի նշւում, բայց միանշանակ տեսանելի է շնիկի ու փիսիկի **հաշտեցումը**: Առանց հաշտեցման գործողութեան համատեղ աշխատանքն անհնար է: Վերջապէս, զարգացնելով հաշտութեան թեման՝ փիսիկը խնդրեց մէկ այլ թշնամու՝ մկնիկի օգնութիւնը: Հարց է ծագում. ինչո՞ւ հէնց մկնիկը, չէ՞ որ մուկը երբեւիցէ չի համարուել լինել մարդու ընկերը, այլ ընդհակառակը՝ միշտ գող եւ վնասատու կենդանի է: Հէքեաթում փիսիկը ոչ միայն սկսեց հաշտուել մկնիկի հետ, այլեւ գործեց որպէս խաղաղարար՝ մկների եւ մարդու հաշտեցման համար: Յիշե՛նք մեր Տէր Յիսուս Քրիստոսի խօսքերը. **«Երանի՛ խաղաղարարներին, որովհետեւ նրանք Աստծու որդիներ պիտի կոչուեն»** (Մատթ. 5, 9):

Այսպիսով, մեր առջեւ բացայայտւում է հէքեաթի իմաստը, այն է՝ հաշտեցումը աւելի բարձր նպատա-

կի համար: Հետեւաբար, մենք պէտք է սովորենք՝ ինչպէ՛ս ներել եւ ինչպէ՛ս ներուել: Դարձեալ յիշե՛նք Տէր Յիսուս Քրիստոսի խօսքերը. **«Ես ձեզ ասում եմ. սիրեցէ՛ք ձեր թշնամիներին, օրհնեցէ՛ք ձեզ անիծողներին, բարութի՛ւն արէք ձեզ ատողներին եւ աղօթեցէ՛ք նրանց համար, որ չարչարում են ձեզ եւ հալածում, որպէսզի որդիները լինէք ձեր Հօր, որ երկնքում է. քանի որ նա իր արեգակը ծագեցնում է չարերի եւ բարիների վրայ եւ անձրեւ է թափում արդարների եւ մեղաւորների վրայ»** (Մատթ. 5, 43-45): Հէնց այս պատուիրանով է կատարւում հաշտեցումը: Սակայն փոխաբերական իմաստով, ըստ Աւետարանի, պատուիրանապահութեան բարձրագոյն նպատակն է՝ հասնելու Աստծու արքայութեանը, որն այս հէքեաթում փոխաբերաբար պատկերուած է որպէս «շաղգամ»: Եւ քանի որ համեմատեցինք շաղգամն Աստծու արքայութեան հետ, եկէ՛ք յիշենք եւս մէկ աւետարանական արտայայտութիւն. **«Այժմ երկնքի արքայութիւնը ուժով է վերցւում, եւ ուժեղներն են այն յափշտակում»**, կամ էլ՝ **«Երկնքի արքայութիւնը բռնադատւում է, եւ հզօրներն են յափշտակում այն»** (Մատթ 11, 12):

Հէքեաթի մէկ այլ իմաստն ընտանիքի կամ եկեղեցու միասնական ուժը ցոյց տալն է: Մարդը միայնակ չի կարող ամէն ինչ անել, նրան օգնականներ են պէտք, եւ այդ դէպքում ընտանիքն ու եկեղեցին միշտ օգնութեան են գալիս: Աւելին՝ ընտանիքը կամ եկեղեցին միասին են քաղելու աշխատանքի պտուղները: Նոյնիսկ ամենափոքր

ներդրումն ընդհանուր գործի համար երբեմն կարող է վճռական արդիւնք ունենալ: Չգիտես ինչո՛ւ, բայց այս պարզ ճշմարտութիւնը յաճախ մոռացւում է մեր կեանքում:

Քրիստոնէական մէկ հոգու մէջ թաքնուած ամէն մի բարոյական յաղթանակ արդէն իսկ հոգեւոր յաղթանակ է եկեղեցու եւ ամբողջ քրիստոնէական աշխարհի համար, որովհետեւ, ինչպէս ֆիզիկական աշխարհում երկնային լուսատուները ձգւում են միմեանց առանց որեւէ նիւթական միջոցի, այնպէս էլ հոգեւոր աշխարհում իւրաքանչիւր հոգեւոր անձնաւորութիւն, այն պայմանով ու փաստով, որ մնում է իր բարոյական բարձրութեան վրայ, բարձրացնում է վեր եւ դէպի իրեն ձգում այն ամէնը, ինչ որ իր նմանութիւնն է գտնում այլ մարդկանց սրտերում: Հոգեւոր աշխարհում իւրաքանչիւր անձ իր ազդեցութիւնը թողնում է բոլորի վրայ, իսկ բոլորն իրենց հերթին ազդեցութիւն են թողնում իւրաքանչիւր անձի վրայ: Եթէ նայենք հոգեւոր տեսանկիւնից, ապա ստացւում է, որ մեզանից իւրաքանչիւրն իր հոգու ներսում կատարուած հոգեւոր յաղթանակներով կարող է օգտակար լինել եկեղեցուն: Պարզւում է, որ նոյնիսկ փոքր-ինչ բարոյական յաղթանակը, որին մենք կարող ենք հասնել մեր հոգու ներսում, ունի հսկայական ուժ, զօրութիւն եւ ազդեցութիւն: Սա իսկապէս փոխում եւ նորոգում է ամբողջ եկեղեցին: Օրինակ՝ մեր ինքնագովութեան, եսասիրութեան, փառամոլութեան կամ բոլորին դատապարտելու փորձի եւ այլ կրքերի յաղթա-

հարումը մեր օգնութիւնն է եկեղեցուն: Հետեւապէս, հոգեւոր առումով մկնիկը գործադրեց մեծագոյն ջանք ու աշխատանք: Նա յաղթահարեց մահուան վախը՝ ընդհանուր գործին ներգրաւուած լինելու համար: Ուստի՝ «մկնիկի» բարոյական յաղթանակն այն ջանքն է, որն իր ազդեցութիւնն է թողնում քրիստոնեայ ժողովրդի եւ համայն մարդկության վրայ: Եթէ ջանանք մեր միջից վանել դատելը, հպարտութիւնը, նախանձը, զայրոյթը, բամբասանքը եւ թաքնուած միւս ներքին կրքերը, ապա դա իր ազդեցութիւնը պիտի թողնի ամբողջ համայնքի վրայ, մասնաւորապէս, մեր շրջապատի մթնոլորտի ու մեր ժողովրդի ընդհանուր հոգեւոր վիճակի վրայ: Այդ հոգեւոր վիճակը կախուած է իւրաքանչիւր անհատից: Հետեւաբար, մի փոքրիկ բարի գործը կարող է չէզօքացնել ամբողջ չարիքը:

Պատկերացնենք, թէ շաղգամն ինչ-որ խնդիր է մեր կեանքում, որը լուծման կարիք ունի: Այսպէս, պապը շաղգամ տնկեց, որն աճեց, աճեց, որն ի վերջոյ պէտք էր քաղել եւ լուծել այդ խնդիրը: Շաղգամը շատ-շատ էր մեծացել: Պապը, տեսնելով, թէ որքան է մեծացել շաղգամը, ինչո՞ւ որոշեց այն միայնակ հանել: Նա յոյսը դրեց իր վրայ եւ գուցէ ուզում էր պարծենալ, թէ ի՛նչ շաղգամ է քաղել: Պապը փորձեց մենակ խնդիրը լուծել, բայց երբ չկարողացաւ դա անել, կանչեց իր ամենամօտ մարդուն՝ տատուն: Նրանք փորձեցին միասին այդ խնդիրը լուծել, բայց դարձեալ ոչինչ չստացուեց: Եւ տատն օգնութեան կանչեց թոռնիկին: Թոռնիկը կանչեց

շնիկին: Բայց միեւնոյն է, նրանք չկարողացան հանել շաղգամը: Շնիկը պէտք է կանչեր փիսիկին: Իսկ կատուներն ու շները սովորաբար վիճում ու կռւում են, նոյնիսկ մի ժողովրդական ասոյթ կայ՝ «շուն ու կատու են իրար նկատմամբ»: Այնուամենայնիւ, չնայած դրան՝ փիսիկն օգնութեան հասաւ: Բայց շաղգամն այս անգամ նոյնպէս մնում է հաստատուն: Էլ ո՞ւմ կանչել օգնութեան: Մնաց միայն մկնիկը: Եւ այսպէս շարունակ տարբեր օգնականներ կանչուեցին, իսկ վերջում պարզուեց, որ խնդիրը լուծուեց միայն այն ժամանակ, երբ մէկը, իր կեանքը վտանգելով, մասնակցեց այդ խնդրի լուծման գործում: Փիսիկի ճանկերը մահաբեր են մկնիկի համար, սակայն մկնիկն արձագանգեց օգնութեան կանչին, ներեց փիսիկին յաւէրժական թշնամանքի համար եւ հաւատաց բարեկամութեան կանչին: Իսկ արդիւնքում նրանք բոլորով միասին շաղգամը հանեցին: Ոչ թէ մկնիկի ֆիզիկական ուժն էր որոշում ամբողջ խնդիրը (թէեւ դա էլ կարեւոր է), այլ՝ մահացու թշնամութեան յաղթահարումը, բոլորի հաշտեցումը, համախմբումը եւ միասնութիւնը՝ մէկ նպատակի ու ընդհանուր գործի համար:

Յաճախ մեր կեանքում խնդիրները չեն լուծւում, թէեւ մասնակցում են զօրեղ մարդիկ, որոնք ունեն իշխանութիւն, հարստութիւն կամ էլ ազդեցութիւն: Եւ որպէսզի խնդիրը լուծուի, անհրաժեշտ է, որ գործին մասնակցեն այնպիսի մարդիկ, ովքեր թէեւ չունեն մեծ իշխանութիւն, հարստութիւն կամ էլ ազդեցութիւն, սակայն ունեն համառութիւն՝ իրենց

յարմարաւէտութիւնն ու բարեկեցութիւնը զոհաբերելու՝ ուրիշների կամ ընդհանուր գործի համար: Երբ նման մարդիկ են յայտնւում, այդ ժամանակ է, որ «անլուծելի» խնդիրները յաճախ լուծւում են մեր կեանքում:

Հէքեաթի այսպիսի ըմբռնումը թոյլ է տալիս այլ կերպ նայել մեզ վրայ: Օրինակ՝ այգու մշակների մասին աւետարանական առակում (տե՛ս Մատթ. 20, 1-16) նշւում է, որ այգու մշակներն աշխատում էին ամբողջ օրը, եւ նրանց թւում էր, թէ պէտք է շատ աւելի մեծ վարձատրութիւն ստանային, քան վերջին ժամին եկած մշակները: Երբ նայում ենք այս պատմութեանը, մկնիկը նոյնպէս վերջինն էր, բայց պարզուեց, որ իր ջանքերն ու մասնակցութիւնը որոշիչ էին այդ խնդրի լուծման համար: Իսկ հոգեւոր առումով գուցէ նա շատ աւելի մեծ գործ կատարեց, քան նոյնիսկ պապն ու տատը: Հետեւապէս, պարզ է, որ իրենց ջանքերի դիմաց վարձատրութիւն ստանալու համար պէտք է պակաս չվճարուեն նրանցից, ովքեր աշխատել են սկզբից:

Այսպիսով, գալիս ենք այն եզրակացութեան, որ ընդհանուր գործում յաջողութեան հասնելու համար պէտք է հաշտ լինել բոլորի հետ: Եւ կարեւոր է իմանալ, որ թէեւ «փոքր» ես, սակայն պէտք է համարձակ լինես, եւ քո մասնակցութիւնը կարող է դրականօրէն որոշել գործի ընթացքն ու աւարտը: Արդիւնաւէտ աշխատանքը կարող է կատարուել միայն համաձայնութեան, համերաշխութեան եւ ներդաշնակութեան մէջ: Իսկ որտեղ կայ համա-

ձայնութիւն, համերաշխութիւն եւ ներդաշնակութիւն, այնտեղ ներկայ է սէրը, քանի որ առանց սիրոյ վստահութիւն չի լինում: Իսկ Աւետարանները ցոյց են տալիս, որ Փրկչի եւ մարդկանց յարաբերութիւնները հիմնուած են սիրոյ վրայ:

«Պապն ու շաղգամը» հէքեաթը փորձուել եւ ստուգուել է Հայոց դարաւոր պատմութեան կողմից, երբ ընդհանուր թշնամու դիմաց ժողովուրդը միաւորուել է հաւատքով, սիրով եւ յոյսով՝ մոռանալով անհամաձայնութիւններն ու տարակարծութիւնները:

Այս հէքեաթը բացայայտում է այն միասնութեան մասին, որն ստեղծուած է Աստծու սիրով: Մարդու խնամքին վստահելով բոլոր արարածներին՝ Տէրն ասում է, որ մարդը պիտի **«իշխի ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի անասունների եւ երկրի վրայ սողացող բոլոր սողունների վրայ»** (Ծննդ. 1, 28): Մարդուն տրուած է իշխանութիւն, պատասխանատուութիւն, հոգատարութիւն բնութեան եւ ողջ արարչագործութեան նկատմամբ: Մարդը պէտք է թագաւորեր աշխարհում, քանզի ստեղծուել է Աստծու պատկերով ու նմանութեամբ, եւ օժտուած է յատուկ շնորհով՝ թափանցելու արարչագործութեան իմաստի մէջ: Հետեւաբար, Տէր Աստուած, ստեղծելով դաշտային բոլոր գազաններին եւ երկնքի բոլոր թռչուններին, նրանց բերեց Ադամի մօտ, որ տեսնի, թէ նա ինչպէ՛ս է անուանելու նրանց (տե՛ս Ծննդ. 2, 19-20): Ադամը բոլոր անասուններին, երկնքի բոլոր թռչուններին եւ դաշտային բոլոր գազաններին

անուանակոչեց: Բայց մարդկութեան նախածնողների անկումը ոչնչացրեց մարդու եւ բնական աշխարհի փոխյարաբերութիւնների աստուածատուր սկզբունքները: Ամբողջ ստեղծագործութիւնը, ներառեալ կենդանական աշխարհը, դարձաւ ապականութեան ու մահուան ստրուկը, ինչպէս Պօղոս առաքեալն է նշում. **«Ստեղծուածները մեծ ակնկալութեամբ սպասում են Աստծու որդիների յայտնութեանը, քանի որ ստեղծուածները ունայնութեանը հնազանդուեցին (ոչ իրենց կամքով, այլ նրա համար, որ Աստուած հնազանդեցրեց նրանց) այն յոյսով, որ ստեղծուածներն իրենք էլ ազատուեն ապականութեան ծառայութիւնից՝ Աստծու որդիների փառքի ազատութեանը հասնելու համար»** (Հռոմ. 8, 19-21):

Մենք գիտենք իրական մէկ այլ օրինակ երկրի վրայ՝ Նոյեան տապանը: Սուրբ նախահայր Նոյը փրկարար տապանի մէջ հաւաքեց բոլոր երկրային արարածներին եւ պահպանեց կենդանական աշխարհի կեանքը երկրի վրայ: Սակայն մարդու, բնութեան ու կենդանական աշխարհի սկզբնական սիրոյ եւ ներդաշնակութեան մէջ եղող գոյութիւնը Արարիչը կազմակերպել էր Եդեմում՝ աստուածաշնչեան դրախտի պարտէզում, որտեղ բնակուել են մարդկութեան նախածնողները՝ Ադամն ու Եւան:

Արդէն նշել էին, որ փոխաբերական իմաստով, ըստ Աւետարանի, պատուիրանապահութեան բարձրագոյն նպատակն է՝ հասնելու Աստծու արքայութեանը, որն այս հէքեաթում փոխաբերաբար պատ-

կերուած է որպէս «շաղգամ»: Շաղգամը, որը պէտք է դուրս գայ՝ յաւէրժական կեանքն իր մէջ մարմնաւորող Կենաց Ծառն է, սա սխրագործութեան կատարումն է, ընդանուր պատճառը, որը պէտք է իրագործի ամբողջ մարդկութիւնը բնութեան էութիւնների հետ միասին: Պապը եւ տատը փոխաբերաբար նախածնողներ Ադամի ու Եւայի պատկերներն են: Թոռնուհին մարդկութեան յաջորդ սերունդների խորհրդանիշն է: Շնիկը կենդանական աշխարհի պատկերն է, որին յատկապէս մօտ են երեխաները: Սա փրկութեան ընդհանուր գործի կենդանական աշխարհի մասնակցութեան սկիզբն է: Այստեղ յաղթահարւում է անկումից յետոյ ծագած թշնամութիւնը մարդու եւ կենդանական աշխարհի միջեւ: Յաջորդ պատկերը փիսիկն է, որը յաւէրժական թշնամութեան մէջ է շան հետ, եւ այստեղ ընդհանուր ջանքերով յաղթահարւում է կենդանիների միջեւ եղած թշնամութիւնը, որոնք վիճում են եւ չեն հանդուրժում միմեանց: Եւ վերջապէս, մկնիկը, որը պարզապէս կերակուր է փիսիկի համար, կանգնում է իր համար ամենաչար թշնամու ետեւից՝ միասին մասնակցելու շաղգամն արմատախիլ անելու գործին: Սա աւարտն է՝ մարդկութեան եւ ողջ բնութեան միասնութեան վերականգնումը: Ի վերջոյ, շաղգամը նաեւ բուսական աշխարհի պատկերն է: Եւ ոչ թէ մկան փոքրիկ ուժը օգնեց արմատախիլ անել շաղգամը, այլ մահացու թշնամանքի դադարեցումն ու յաղթահարումը, եւ փոխարէնը՝ սիրոյ ու ընդհանուր արարչագործութեան մէջ աշխարհի միաս-

նութեան վերականգնումը: Ժամանակների վերջում, երբ աշխարհը լիովին մաքրուի չարից, տիեզերքը կը գտնի իր սկզբնական միասնութիւնը, ինչպէս այդ մասին գրում են աստուածաշնչեան մարգարէները. «**Այնուհետեւ գայլն ու գառը միասին պիտի ուտեն, ընձառիւծը ուլի հետ պիտի մակաղի, հորթը, ցուլն ու առիւծը միասին պիտի սնուեն, եւ մատաղատի մանուկը պիտի հովուի նրանց: Եզն ու արջը միասին պիտի ուտեն, նրանց ձագերը խառը պիտի շրջեն, եւ առիւծը, ինչպէս եզը, յարդ պիտի ուտի: Մատաղատի մանուկն իր ձեռքը պիտի մտցնի իժերի բունը եւ իժերի ձագերի բունը, ու նրանք ոչ ոքի չպիտի կարողանան վնասել եւ խայթել իմ սուրբ լերան վրայ, քանզի ամբողջ երկիրը ցուելու է Տիրոջ գիտութեամբ՝ նման առատ ջրերին, որոնք ծածկում են ծովերը** (Ես. 11, 6-9):

Եկեղեցին Քրիստոսի Մարմինն է (տե՛ս Եփես. 1, 22): Իսկ եկեղեցական կեանքին հաղորդ են նրանք, ովքեր իրապէս Քրիստոսի խորհրդաւոր Մարմնի անդամն են եւ եկեղեցական արարողութիւններին մասնակից լինելուց բացի իրենց հնարաւորութիւններով իրականացնում են այն առաքելութիւնը, որին կոչուած են եկեղեցում ձեւաւորուած համայնքները: Պօղոս առաքեալն ասում է. **«Ինչպէս մի մարմնի մէջ բազում անդամներ ունենք, եւ բոլոր անդամները նոյն գործը չեն անում, այդպէս եւ մենք, թուով շատ, մի մարմին ենք Քրիստոսով, բայց իւրաքանչիւրս միմեանց անդամ ենք»** (Հռոմ. 12, 4-5):

Եկեղեցին Քրիստոսի սիրոյ գիտակցումն է եւ Եկեղեցուց ցանկացած բաժանում այդ սիրոյ խախտումն է, քանզի Եկեղեցու կեանքի մասը լինելով միայն՝ մարդը կարող է ապրել, հոգեպէս աճել ու զարգանալ: Մարմնեղէն օրգանիզմում անդամներն առանձին-առանձին երբէք չեն աճում կամ զարգանում միմեանցից անկախ, այլ միշտ եւ միայն աճում, զարգանում եւ առողջ են մնում՝ կապուած լինելով ամբողջ մարմնի հետ: Քրիստոսի հետ եւ իւրաքանչիւրս միմեանց անդամ լինելով՝ մեր առաքելութեամբ, որը սիրոյ ծառայութիւնն է, կենդանի ու գործուն ենք դարձնում Եկեղեցին: Այդ սիրոյ ծառայութիւններով են Քրիստոսի Մարմնի անդամները, միմեանց օգնելով, քայլ առ քայլ մօտենում Աստծուն: **«Աւելի մեծ սէր ոչ ոք չունի, քան այն, որ մէկն իր կեանքը տայ իր բարեկամների համար»** (Յովհ. 15, 12): Ճշմարիտ սէրն ու միասնութիւնը Քրիստոսի Մարմնի մէջ է աճում, երբ մենք ականջ ենք դնում Տէր Յիսուսի պատուիրանին՝ սիրել մերձաւորին, ինչպէս ինքներս մեզ: Տէրն ասում է **«Իմ սիրոյ մէջ հաստատո՛ւն մնացէք»** (Յովհ. 15, 9): Կատարեալ միասնութիւն մենք ձեռք կը բերենք, եթէ լիակատար հետեւենք Փրկչի պատուիրանին. **«Սա է իմ պատուէրը, որ սիրէք միմեանց, ինչպէս որ ես սիրեցի ձեզ»** (Յովհ. 15, 12): Միայն այդկերպ է իրականանում հետեւեալ խօսքը. **«Արդ, դուք մարմինն էք Քրիստոսի եւ անդամներ՝ նրա անդամներից»** (Ա. Կորնթ. 12, 27):

Լինելով Քրիստոսի Խորհրդաւոր Մարմնի անդամները՝ ընդհանուր գործի համար մենք պէտք է նաեւ լինենք հեզ ու խոնարհ, թողնենք հպարտութիւնը, աներողամտութիւնը, բոլոր տեսակի վէճերը եւ փնտռե՛նք հաշտութիւն ու խաղաղութիւն: Խօսե՛նք ընտանիքի օրինակով: Ընտանիքն ամենակարեւորն է յատկապէս փոքրիկների կեանքում: Իւրաքանչիւր ընտանիք ունի մէկ ընդհանուր բան: Ընտանիքը ՓՈՔՐԻԿ ԵԿԵՂԵՑԻ է: Պօղոս առաքեալն ընտանիքը նմանեցնում է փոքր եկեղեցու, որտեղ փեսան Քրիստոս է, հարսը՝ Եկեղեցին, որոնց հետ ընտանիքի բոլոր անդամները մի ամբողջութիւն են կազմում: Ցանկացած ընտանիքի բանաձեւ պիտի հանդիսանայ ամուր սէրը: Այն սէրը, որը պէտք է ծնի փոխզիջում, համբերատարութիւն, միմեանց ներելու կարողութիւն, եւ այդ սիրով զարգացող ցանկացած ընտանիք պիտի լինի ամուր հիմքերի վրայ: Սա տնօրինութիւն է Քրիստոսի Մարմնի ներսում: Ինչպէս ցանկացած եկեղեցում կան քահանաներ, սարկաւագներ եւ եկեղեցականներ, այնպէս էլ ընտանիքում: Հայրիկն ընտանիքի քահանան է, մայրիկը սարկաւագութիւն է կատարում, այսինքն՝ նա քահանայի օգնականն է, իսկ երեխաները ծխականներն են: Ինչո՞ւ են նրանք բոլորը միասին: Սա՛ է ընդհանուր պատճառը՝ միմեանց օգտակար լինել փրկութեան ճանապարհին, միմեանց բեռը կրել եւ աճել Աստծու սիրոյ մէջ: Քրիստոսի՝ «**միմեանց սիրելու նոր պատուիրանը»** (Յովհ. 13, 35), ինչպէս նաեւ առաքելաւանդ՝ **«Միմեանց բեռը կրեցէ՛ք եւ**

**այդպիսով կատարեցէ՛ք Քրիստոսի օրէնքը»** (Գաղ. 6, 2) պատգամը, հաւասարապէս վերաբերում է ե՛ւ եկեղեցուն, ե՛ւ ընտանիքին: Այո՛, միմեանց սիրելու եւ միմեանց բեռը կրելու տիրաւանդ յորդորի կենսավայրն՝ ընտանիքն է: Տէր Յիսուս Զակքէոսին ասաց. **«Այսօր այս տան համար փրկութիւն եղաւ»** (Ղուկ. 19, 9):

Ուշագրաւ է, որ եկեղեցու կարեւոր դերակատարութիւնը բացայայտելու համար, Աստուածաշունչն ուղիղ կերպով բերում է ընտանիքի օրինակը, իսկ ընտանիքի կարեւորութիւնը յատկանշելու պարագայում՝ Քրիստոս-եկեղեցի զուգահեռը: Այսպիսով, ընտանիքն է սկզբնական ու նախապատիւ այն առաջին եկեղեցին, որտեղ երաշխաւորւում է մարդկութեան ապագան ու հոգեւոր անվտանգութիւնը: Եկեղեցին եւ ընտանիքը, որպէս Քրիստոսով իրագործուած միասնութիւն եւ Նրանով կերպաւորուած կարգաձեւ՝ կեդրոնական, կենսական, որոշադրիչ տեղ, դիրք եւ դեր ունի քրիստոնեայ անունը կրող ամէն մի անձի կեանքում:

Այս հէքեաթ-առակն արդեօք նման չէ՞ Յիսուսի պատմած մանանեխի հատիկի եւ սերմնացանի առակներին: **«Երկնքի արքայութիւնը նման է մանանեխի հատիկի, որ մի մարդ, առնելով, սերմանեց իր արտի մէջ: Այն փոքր է, քան բոլոր սերմերը, սակայն երբ աճում է, բոլոր բանջարներից աւելի է մեծանում ու ծառ է լինում, այն աստիճան, որ երկնքի թռչունները գալիս են ու նրա ճիւղերի վրայ հանգստանում»** (Մատթ. 13, 31-32): Մանանեխի հա-

տիկի եւ սերմնացանի առակներում Աստծու արքայութիւնն առանց աշխատանքի չի գալիս: Այն գալիս է Աստծու՝ երկրի առատաձեռնութեան եւ Նրա՝ աշխարհի մասին մեր ըմբռնման ու մեր սեփական գործողութիւնների շնորհիւ՝ այն առատօրէն իրականացնելու համար: Եկեղեցին մարմնաւորում է Աստծու արքայութիւնն աշխարհում, որը բխում է մեր հաւատքի թարթումներից, բարութեան եւ սիրոյ արարքներից: Այնպէս, ինչպէս սերմերը, որոնք խառնւում են պարարտ հողին, արեւի եւ անձրեւի հետ, շատ աւելի են մեծանում ու ծառ լինում, այդպէս էլ Աստծու թագաւորութիւնը հնարաւոր չէր լինի առանց Աստծու հետ մարդկային փոխգործակցութեան եւ ուշադրութեան:

Թէպէտ Յիսուս մեզ ասում է, թէ մանանեխի հատիկը սերմերից ամենափոքրն է, սակայն սերմնահատիկների ընտանիքում մանանեխի հատիկից շատ աւելի փոքր սերմեր էլ կան: Օրինակ՝ շաղգամի սերմը մանանեխի սերմից էլ փոքր է: «Սերմերից ամենափոքրն է» ասելով՝ Յիսուս պարզապէս ուզում է ասել, որ մանանեխի հատիկը փոքր սերմնահատիկներից մէկն է: Եւ սերմնացանները շատ լաւ գիտեն այս մասին: Քրիստոս Աստծու արքայութիւնը նմանեցնում է փոքր սերմի, պարզապէս որպէսզի մեզ ցոյց տայ, որ Երկնքի արքայութիւնը կարող է սկսուել փոքրից, բայց այն ունի ներուժ՝ աճելու եւ անսահմանօրէն ընդլայնուելու՝ շատերին ապահովելով փրկարար ապաստան: Աստծու խօսքը, թէեւ իր տեսքով կարող է փոքր թուալ, սակայն իր մէջ

պարունակում է անհաւատալի փոխակերպող եւ նորոգող զօրութիւն: Մանանեխի հատիկի առակը, ինչպէս նաեւ «Պապն ու շաղգամը» հէքեաթ-առակը մեզ սովորեցնում են, որ շատ փոքր բանի արդիւնքում հսկայական ու զօրաւոր բաներ կարող են լինել: Նախկին եկեղեցում սկզբնապէս քիչ թուով հաւատացեալներ կային, բայց Յիսուսի հետեւորդների թիւն աճում եւ աճում էր: Դա տեղի էր ունենում միայն այն պատճառով, որ այդ առաջին մի քանի հաւատարիմ ու նախանձախնդիր անհատները տարածեցին փրկութեան աւետիսը:

Սիրելի հայրե՛ր ու մայրե՛ր, ամէն ջանք թափեցէ՛ք, որ ձեր զաւակները գիտենան փրկութեան ճշմարիտ եւ ուղիղ ճանապարհը: Ամո՛ւր բռնեցէք ձեր թանկագին իրաւունքը՝ լինելու ձեր զաւակների ուղղափառ հաւատի դաստիարակութեան առաջին ուսուցիչները: Երեխաներին պէտք է վաղ տարիքից ծանօթացնել ուղղափառ հաւատքին՝ նրանց տանել եկեղեցի, սովորեցնել աղօթել, ներգրաւել Սուրբ Պատարագի արարողութեանը: Այսպէս երեխան կը սովորի ապրել ճշմարիտ հաւատքով եւ առաքինի կեանքով: Յաճախ են ծնողները բանաւոր կերպով խրախուսում իրենց երեխաներին միանալ եկեղեցուն, սակայն իրենք չեն ապրում հոգեւոր կեանքով: Եւ երեխան չի կարողանում հասկանալ, թէ ինչպէ՛ս կարելի է համատեղել քրիստոնէական եւ ընտանեկան արժէքները: Մեծանալով՝ նման երեխաներն ամէնից յաճախ հեռանում են եկեղեցուց: Եթէ ծնողները ցանկանում են, որ իրենց երեխաները

հոգեւորապէս զարգանան, ստանան քրիստոնէական կրթութիւն եւ չհեռանան եկեղեցուց, նրանք պէտք է իրենց վարքագծում, խօսքերում եւ արարքներում մարմնաւորեն քրիստոնէական արժէքները:

Սիրելի՛ ծնողներ, յաճախ աղօթեցէ՛ք ձեր երեխաների համար, քանզի ծնողների աղօթքը մեծ ազդեցութիւն ունի երեխայի հոգու ձեւաւորման վրայ: Ցաւօք սրտի, շատ ծնողներ դա չեն անում: Բայց երբ մենք մեր երեխաներին բերում ենք լոյս աշխարհ, մեզ պատասխանատուութիւն է տրւում նրանց համար: Եւ սա պատասխանատուութիւն է ոչ միայն ֆիզիկական, այլեւ հոգեւոր բարեկեցութեան: Ծնողական աղօթքը պաշտպանում եւ առաջնորդում է երեխային՝ դիմակայելու այս խաւար աշխարհի գայթակղութիւններին: Ամէն օր մենք պէտք է պատրաստ լինենք՝ յաղթահարելու աշխարհի ազդեցութիւնն առողջ քրիստոնէական կրթութեան միջոցով:

Այն ամէնը, ինչ երեխան սովորում է դպրոցում, պէտք է ստուգուի եւ շտկուի տանը: Պէտք չէ կարծել, որ այն, ինչ նրան աւանդում են ուսուցիչները, պարզապէս օգտակար, անհրաժեշտ կամ չէզօք է: Ի վերջոյ, նոյնիսկ եթէ նա ձեռք բերի օգտակար գիտելիքներ կամ որեւէ հմտութիւն, նրան յաճախ կը սովորեցնեն բազմաթիւ սխալ տեսակէտներ եւ գաղափարներ: Գրականութեան, երաժշտութեան, պատմութեան, արուեստի, իմաստասիրութեան, գիտութեան եւ, իհարկէ, կեանքի ու ճշմարիտ կրօնի նկատմամբ երեխաների գնահատականն առաջին

հերթին պէտք է բխի ոչ թէ դպրոցից, այլ տնից եւ եկեղեցուց, այլապէս երեխան սխալ կրթութիւն կը ստանայ: Առողջ գրականութեան սովոր երեխան, ով զգացել է դրա ազդեցութիւնն իր հոգու վրայ, չի դառնայ ժամանակակից հեռուստատեսութեան, հոգին աւերող եւ քրիստոնէական ճանապարհից հեռացնող էժանագին վէպերի ու գաղափարների անխոհեմ հետեւորդ:

Սբ. Յովհան Ոսկեբերան հայրապետն իր «Խօսք երեխաների դաստիարակութեան մասին» գրուածքում ասում է. «Ես խնդրում եւ աղաչում եմ ձեզ, սիրելինե՛ր, որ մենք մեծ հոգատարութեամբ վերաբերուենք մեր զաւակներին եւ ամէն հնարաւոր հոգ տանենք նրանց հոգիների փրկութեան համար: Ընդօրինակեցէ՛ք երանելի Յոբին, ով նոյնիսկ մտքում վախենալով իր մեղքերից՝ զոհեր էր մատուցում իր զաւակների համար եւ մեծ հոգատարութիւն էր ցուցաբերում նրանց համար: Ընդօրինակեցէ՛ք Աբրահամին, ով նոյնպէս անհանգստանում էր ոչ թէ փողի եւ ունեցուածքի համար, այլ աստուածային օրէնքների համար, թէ ինչպէս անվնաս փոխանցի դրանց պահպանումն իր ժառանգներին: Եւ երբ Դաւիթը մահանում էր, մեծ ժառանգութեան փոխարէն կանչեց որդուն, նոյն բանը սերմանեց եւ մանրամասն ասաց նրան, որ եթէ ուզում ես ապրել Աստծու օրէնքներով, ապա քեզ անսպասելի ոչինչ չի պատահի, բոլոր գործերդ կ՚ընթանան ըստ քո ցանկութեան, եւ մեծապէս ապահովութիւն կը վայելես: Իսկ եթէ դու հեռանաս այս օգնութիւնից, ապա թագա-

ւորութիւնը եւ այդ մեծ իշխանութիւնը քեզ ոչ մի օգուտ չեն բերի: Ի վերջոյ, եթէ բացակայում է բարեպաշտութիւնը, նոյնիսկ այն գանձերը, որոնք գոյութիւն ունեն, կորչում են վտանգից եւ ծայրայեղ ամօթից, իսկ եթէ այն ներկայ է, ապա գալիս են նաեւ նրանք, որոնք այնտեղ չկային: Հետեւաբար, ծնողները պէտք չէ մտածեն, թէ իրենց զաւակներին ինչպէ՛ս հարստացնեն արծաթով եւ ոսկիով, այլ այն մասին, թէ ինչպէս նրանք բոլորից աւելի հարուստ դառնան բարեպաշտութեամբ, իմաստութեամբ եւ առաքինութեան ձեռքբերմամբ, կարծես իրենց շատ բան պէտք չէ, որքան էլ տարուած լինեն աշխարհիկ ու երիտասարդական ցանկութիւններով»[1]:

Սիրելի՛ երեխաներ, հնազանդ եղէ՛ք ձեր ծնողներին, ջանացէ՛ք լաւ սովորել, օգտակար եղէ՛ք ձեր տան գործերում եւ այլն: Նպաստեցէ՛ք փոքր եկեղեցու ընդհանուր գործին, աղօթեցէ՛ք ձեր ծնողների համար, գոհութիւն եւ շնորհակալութիւն յայտնեցէ՛ք Աստծուն ձեր ծնողների համար, որոնք ձեր աղօթքների կարիքն ունեն: Աստծուն հաճելի է, երբ երեխաներն աղօթում են: Սակայն ընտանիքից բացի նաեւ ուրիշ աշխարհ կայ: Դա եկեղեցու կեանքն է: Այստեղ դուք նոյնպէս կարող էք խոնարհութիւն եւ հնազանդութիւն դրսեւորել ու օգնել միմեանց: Յիշեցէ՛ք, շնիկը կանչեց փիսիկին... Փիսիկն էլ, ռիսկի դիմելով, եկաւ օգնելու: Անշուշտ, դուք կարող էք մէկի

[1] http://monastyr-uspeniya.ortox.ru/cvetnik_dukhovnyjj/view/id/1169211 (առ 22.07.2024):

հետ վիճաբանել կամ էլ անհաշտ լինել, բայց կարեւոր է հասկանալ, որ պէտք է հաշտուել, քանի որ եկեղեցում պէտք է տիրի սէրը: Եւ դրա համար դուք կարող էք ոտք դնել ձեր «ես»-ի վրայ: Դուք նաեւ գնում էք դպրոց կամ էլ սպորտային որեւէ խմբակ, եւ այստեղ կարող են լինել վէճեր, վիրաւորանքներ, կեղծ մեղադրանքներ, թշնամութիւն: Օրինակ՝ եթէ զբաղւում էք թիմային սպորտով, թիմի յաղթանակի համար, կարող էք վերջին հարուածը փոխանցել ձեր հանդէպ թշնամութիւն ցուցաբերող ընկերոջը եւ ոչ թէ ինքներդ գնդակը ցանցից ներս նետէք, եւ գուցէ այդպէս անելով յայտնի դառնաք, բայց ամէն ինչ արէ՛ք ձեր թիմի ընդհանուր յաղթանակի համար: Ուժն ու յաղթանակը միասնութեան մէջ են: Սա՛ է այս հէքեաթի հիմնական իմաստը: Ընդհանուր գործի բարօրութեան համար դուք կարող էք զոհաբերել ձեր անձնական նկրտումներն ու փառասիրութիւնը:

Հէքեաթն աւարտւում է նրանով, որ բոլորը, միասնաբար իրար օգնելով, վերջապէս հանում են շաղգամը: Աշխատանքն աւարտուած է, լաւ սկիզբը դրուած է, եւ այսուհետեւ ամէն ինչ լաւ է լինելու, որովհետեւ ամէն մէկն իր տեղում իրեն լաւ դրսեւորեց: Յիշե՞նք, որ ձեզանից իւրաքանչիւրը կարող է յայտնուել հէքեաթի ցանկացած կերպարի՝ պապիկի, տատիկի, թոռնիկի, շնիկի, փիսիկի եւ փոքրիկ մկնիկի տեղում: Ուստի, այս հէքեաթ-առակի իմաստն այն է, որ սիրոյ միասնութեան եւ համերաշխութեան մէջ մեծ ուժ կայ: Ընդհանուր գործը կարող է իրականացուել միայն այն դէպքում, երբ կայ

միասնութիւն եւ համերաշխութիւն, եւ աւելին՝ սրանք հիմնուած են մերձաւորի հանդէպ սիրոյ վրայ:

Եզրափակելով, Աստուածաշնչից մի քանի համարներ կարդանք, որոնք խօսում են միասնութեան եւ համերաշխութեան մասին: **«Համերա՛շխ եղէք միմեանց հետ. մի՛ մեծամտացէք, այլ խոնա՛րհ եղէք խոնարհների հանդէպ. դուք ձեզ իմաստունի տեղ մի՛ դրէք. մէկի չարի փոխարէն չար մի՛ հատուցէք. խորհեցէ՛ք բարին բոլոր մարդկանց առաջ»** (Հռոմ. 12, 16-17): Տէր Յիսուս աղօթում է Իր Հօրը միասնութեան համար: Այստեղ չորս անգամ Նա նշում է Աստծու եւ միմեանց հետ մի լինելու մասին. **«Եւ ես այլեւս աշխարհի մէջ չեմ, իսկ նրանք աշխարհի մէջ են. եւ ես դէպի քեզ եմ գալիս... որպէսզի ամէնքը մի լինեն. ինչպէս դու, Հա՛յր, իմ մէջ, եւ ես՝ քո մէջ, որպէսզի նրանք էլ մեր մէջ լինեն, եւ որպէսզի աշխարհն էլ հաւատայ, թէ դո՛ւ ուղարկեցիր ինձ: Եւ ես տուեցի նրանց այն փառքը, որ դու ինձ տուեցիր, որպէսզի մի լինեն, ինչպէս եւ մենք մի ենք»** (Յովհ. 17, 11, 21-22):